ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.01.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/284

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Մասնակից՝ «Վիշկա» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Վիշկա» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Պարանյանի, Հ. Ենգոյանի և Հ. Մելքոնյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-18/20» բաց մրցույթ, խողովակների և մետաղների ձեռքբերում:

Պայմանագրի ծածկագիրը՝ «01/213»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 23.12.2020թ.-ի թիվ 26/26-1/19339-2020 գրությամբ «Վիշկա» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 16.12.2020թ.-ի թիվ Ե/40/2416-20 գրության հիման վրա, 23.12.2020թ.-ին «Վիշկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 23.12.2020թ.-ին:

23.12.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-LO-2020/284 համարի ծածկագիրը:

15.01.2021թ.-ին 22.01.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 15.01.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 22.01.2021թ.-ին:

2. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն 16.12.2020թ.-ի թիվ Ե/40/2416-20 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

««Տեղեկացնում ենք Ձեզ, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ կողմից (այսուհետ՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ) սեփական կարիքների համար խողովակների և մետաղների ձեռք բերման նպատակով հրապարակվել է «ՀԱԷԿ-ԲՄՊՁԲ-18/20» ծածկագրով գնման ընթացակարգը, որին ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Վիշկա» ՍՊ ընկերությունը: Գնահատող հանձնաժողովի՝ ս/թ հունիսի 24-ի թիվ 2.1 որոշմամբ 4, 5 և 6-րդ չափաբաժնով «Վիշկա» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից և առաջարկվել է կնքել խողովակների և մետաղների մատակարարման պայմանագիր: «Վիշկա» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև ս/թ օգոստոսի 3-ին կնքվել է թիվ 01/213

պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրով մատակարարվող խողովակների և թիթեղի համար սահմանվել է «4-ից 6-րդ չափաբաժինների համար՝ արտադրող ձեռնարկությունը պետք է ունենա միջուկային էներգետիկայի համար արտադրման հավաստագիր: Ապրանքները պետք է ունենան պատրաստման որակի և մետաղի հավաստագրեր, համաձայն ՊՀԱԷԳ-7-008-89-ի: Արտադրանքի ընդունումը պետք է իրականացվի լիազորված կազմակերպության կողմից ըստ որակի պլանի՝ համաձայն ՀՊ-071-18, ՊԴ ԷՕ 1.1.2.01.0713-2013 և ՊԴ ԷՕ 1.1.2.05.0929-2013 փաստաթղթերի»:

«Վիշկա» ՍՊԸ կողմից ս/թ նոյեմբերի 18-ին (հաշիվ-ապրանքագիր թիվ U7023775529) մատակարարված ապրանքների համար առկա է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի ՏՎԲ-ի ս/թ նոյեմբերի 25-ի մուտքային վերահսկողության N11-20-339 ակտը (եզրակացությունը), որի համաձայն կից փաստաթղթերը չեն համապատասխանում պայմանագրով սահմանված փաստաթղթերին, մասնավորապես՝

- չեն ներկայացվել պատրաստման որակի և մետաղի հավաստագրերի բնօրինակները,

- առկա չեն եղել արտադրող ձեռնարկությունների միջուկային էներգետիկայի համար արտադրման հավաստագիրը,

- չեն ներկայացվել լիազորված կազմակերպությունների կողմից հաստատված որակի պլանները:

Ս/թ նոյեմբերի 26-ի թիվ Ե/40/2244-20 գրությամբ «Վիշկա» ՍՊԸ-ն տեղեկացվել է նշված ակտի մասին և սույն գրությամբ «Վիշկա» ՍՊԸ-ին առաջարկվել է ներկայացնել պայմանագրով սահմանված վերը նշված փաստաթղթերը:

Ի պատասխան «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի ս/թ նոյեմբերի 26-ի թիվ Ե/40/2244-20 գրության, «Վիշկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հիմնավորումները (փաստաթղթերը) կրկին եղել են թերի և ոչ լիարժեք:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի ս/թ դեկտեմբերի 14-ի թիվ Ե/40/2382-20 գրությամբ «Վիշկա» ՍՊԸ-ն ծանուցվել է կողմերի միջև ս/թ օգոստոսի 3-ին կնքված թիվ 01/213 պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, որը սահմանված կարգով նույն օրը հրապարակվել է նաև www.gnumner.am կայքում:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-18/20» ծածկագրով

հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Վիշկա» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Վիշկա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 07.09.2020թ.-ին գրությամբ դիմել է «Վիշկա» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.12.2020թ.-ի թիվ 26/26-1/19339-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայանալով հրավիրված նիստին նաև ներկայացրել է գրավոր դիրքորոշում, հայտնելով հետևյալը.

««Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Վիշկա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 03.08.2020թ. կնքվել է պետության կարիքների համար խողովակների և մետաղների ձեռքբերման թիվ «01/213» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Նշված պայմանագրի.

1.1. կետի համաձայն՝ «Վիշկա» ՍՊԸ-ն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված խողովակներ և մետաղներ (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2.1. կետի համաձայն՝ գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չնդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց

փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

Պայմանագրի Հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսվել են հետևյալ տեխնիկական պարամետրեր.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

անվանումը	*տեխնիկական բնութագիրը*
Խողովակ	*219x12 ОСТ 24.125.01-89, 08Х18Н10ТУ, ℓmin- 4 մետր, ТУ 14-3Р-197-2001, դասակարգային նշանակումը- 2Н ըստ НП-001-97, խումբը В ըստ ПНАЭГ-7-008-89, աշխատանքային միջավայրը – առաջին կոնտուրի ջերմակիր, աշխատանքային ճնշումը 9,02 ՄՊա, աշխատանքային ջերմաստիճանը 290°С*
Խողովակ	*89x8 ОСТ 24.125.30-89, Ст20, ℓmin- 4 մետր, ТУ 14-3Р-55-2001 դասակարգային նշանակումը- 2Н ըստ НП-001-97, խումբը В ըստ ПНАЭГ-7-008-89, աշխատանքային միջավայրը – գոլորշի, ջուր, աշխատանքային ճնշումը 11,77 ՄՊա, աշխատանքային ջերմաստիճանը 250°*
Խողովակ	*219x13 ОСТ 24.125.30-89, Ст20, ℓmin- 5 մետր, ТУ 14-3Р-55-2001 դասակարգային նշանակումը- 2Н ըստ НП-001-97, խումբը В ըստ ПНАЭГ-7-008-89, աշխատանքային միջավայրը – գոլորշի, ջուր, աշխատանքային ճնշումը 11,77 ՄՊա, աշխատանքային ջերմաստիճանը 250°*
Թիթեղ	*Б-ПН 40x1400x2500 ГОUS 19903-2015 08Х18Н10Т ГОUS 7350-77 - (2հատ) դասակարգային նշանակումը- 2Н ըստ НП-001-97, խումբը В ըստ ПНАЭГ-7-008-89, աշխատանքային միջավայրը- դիստիլատ, աշխատանքային ճնշումը 13.73 ՄՊա, աշխատանքային ջերմաստիճանը 335°С*

1) Բնութագրում օգտագործվող նշաններ՝ Ø–տրամագիծ, ℓmin - նվազագույն երկարություն,

2) Ապրանքները պետք է լինեն նոր, արտադրման տարեթիվը սկսած 2019թ, փաթեթավորումը պետք է ապահովի ապրանքի մեխանիկական ամբողջականությունը, փաստաթղթերը պետք է թարգմանված լինեն հայերեն կամ ռուսերեն լեզվով,

3) թիվ 1 չափաբաժնի համար՝ անվտանգության դասը 4՝ համաձայն НП-001-97-ի, ապրանքները պետք է ունենան պատրաստման որակի և մետաղի հավաստագրեր,

4) Ապրանքների համար արտադրող ձեռնարկությունը պետք է ունենա միջուկային էներգետիկայի համար արտադրման հավաստագիր:

Ապրանքները պետք է ունենան պատրաստման որակի և մետաղի հավաստագրեր, համաձայն ПНАЭГ-7-008-89-ի: Արտադրանքի ընդունումը պետք է իրականացվի

լիազորված կազմակերպության կողմից ըստ որակի պլանի՝ համաձայն ՀՊ-071-18, ՀՀ ՇՆ 1.1.2.01.0713-2013 և ՀՀ ՇՆ 1.1.2.05.0929-2013 փաստաթղթերի:

«Վիշկա» ՍՊԸ-ի կողմից վերը նշված ապրանքատեսակները պատվիրվել են ՌԴ մետալուրգական գործարաններում և 18.11.2020թ. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին սահմանված ժամկետում մատակարարվել է պայմանագրով նախատեսված խողովակների և մետաղները /հաստատվում է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 27.11.2020թ. թիվ Ե/40/2244-20 և 14.12.2020թ.-ի թիվ Ե/40/2382-20 գրություններով, կցվում են/:

Ապրանքը մատակարարելուց հետո «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից 25.11.2020թ. կազմվել է թիվ 11-20-339 մուտքային վերահսկողության ակտը, որով արձանագրվել է հետևյալը. «Մուտքային ստուգման արդյունքում հայտնաբերվել են.

ա) Տարան և փաթեթվածքի վիճակը–համապատասխանում է.

բ) Ուղեկցող փաստաթղթերի լրակազմությունը–չի համապատասխանում Պայմանագրի Հավելված 1-ի պահանջներին.

գ) Ապրանքի լրակազմությունը–համապատասխանում է հարկային հաշվին.

դ) Ապրանքի վնասվածության արտաքին զննում–չեն հայտնաբերվել:

Եզրակայություն՝ բացակայում են պայմանագրով նախատեսված փաստաթղթերը»:

Այնուհետև ապրանքը Պատվիրատուի կողմից ստանալուց և հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո «Վիշկա» ՍՊԸ-ի համար անսպասելի «ՀԱԷԿ» ՓԲԸ-ից ստացվել է 27.11.2020թ. թիվ Ե/40/2244-20 գրությունը՝ առ այն, որ մատակարարված ապրանքներին կից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում պայմանագրով սահմանված փաստաթղթերին և «Վիշկա» ՍՊԸ-ին խնդրել են ներկայացնել պայմանագրով սահմանված փաստաթղթերը:

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի գրությամբ նշվել է, որ «Վիշկա» ՍՊԸ-ն 18.11.2020թ. մատակարարվել է պայմանագրով նախատեսված ապրանքները, սակայն կից փաստաթղթերը չեն համապատասխանում պայմանագրով նախատեսված փաստաթղթերին, մասնավորապես.

- *չեն ներկայացվել պատրաստման որակի և մետաղի հավաստագրերի բնօրինակները,*
- *առկա չեն եղել արտադրող ձեռնարկությունների միջուկային էներգետիկայի համար արտադրման հավաստագիրը,*
- *չեն ներկայացվել լիազորված կազմակերպությունների կողմից հաստատված որակի պլանները:*

Նույն գրությամբ առաջարկվել է նշված փաստաթղթերը ներկայացնել մինչև 30.11.2020թ., հակառակ դեպքում պայմանագրի կլուծվի, իսկ մատակարարված ապրանքը ենթակա կլինի վերադարձման:

Վերոհիշյալին ի պատասխան՝ «Վիշկա» ՍՊԸ-ի կողմից 30.11.2020թ. գրությամբ կատարվել է Պատվիրատուի պահանջը, այն է՝ ներկայացվել են պահանջված փաստաթղթերը /հիմնավորումները/: Մասնավորապես, «Վիշկա» ՍՊԸ-ն հայտնել է հետևյալը.

- *Բացակայում են պատրաստման որակի և մետաղի հավաստագրերի բնօրինակները - ս/թ նոյեմբերի 18-ին մատակարարված ապրանքների հետ ներկայացվել են պատրաստման որակի և մետաղի հավաստագրերի բնօրինակներից արտատպված օրինակները, որոնց վրա առկա է եղել «Վիշկա» ՍՊԸ-ի կողմից գրառում, մասնավորապես՝ «Համաձայն Հ/Ֆ-ի իսկականի հետ ճիշտ է», ինչը կնքվել և ստորագրվել է:*
- *Բացակայում են արտադրող ձեռնարկությունների միջուկային էներգետիկայի համար արտադրման հավաստագիրը - Վերը նշված հավաստագրերը պետք է համապատասխանեն ГОСТ Р ИСО 9001-2015-ի պահանջներին: Համապատասխան հավաստագրերի օրինակները նույնպես ս/թ նոյեմբերի 30-ին մինչև ժամը 12:00-ն կներկայացվեն «ՀԱԷԿ» ՓԲԸ:*
- *Բացակայում են լիազորված կազմակերպությունների կողմից հաստատված որակի պլանները - Սույն պահանջի հետ կապված կատարվել են մի շարք պարզաբանումներ արտադրող գործարանների հետ, որոնք ներկայացրել են ՌԴ-ում ներկայումս ատոմային էներգետիկայի ոլորտի կարգավորման նպատակով գործող որոշումներ: Վերը նշված հարցումները և ստացված պարզաբանումները առկա են փաստաթղթային տարբերակով, որոնք նույնպես ս/թ նոյեմբերի 30-ին մինչև ժամը 12:00-ն կներկայացվեն «ՀԱԷԿ» ՓԲԸ:*

Այնուհետև վերոհիշյալ փաստաթղթերը և համապատասխան հիմնավորումները «Վիշկա» ՍՊԸ-ի կողմից կատարելուց հետո «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն 14.12.2020թ. թիվ Ե/40/2382-20 գրությամբ հայտնել է, որ միակողմանի լուծում է իր և «Վիշկա» ՍՊԸ-ի միջև 03.08.2020թ. կնքված թիվ 01/213 ծածկագրով պայմանագիրը:

Նշված գրությամբ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն հայտնել է, որ ապրանքը Պատվիրատուի կողմից ստանալուց և հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո «Վիշկա» ՍՊԸ-ին 27.11.2020թ. թիվ Ե/40/2244-20 գրությամբ հայտնել է, որ մատակարարված ապրանքների կից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում

պայմանագրով սահմանված փաստաթղթերին և «Վիշկա» ՍՊԸ-ին խնդրել են ներկայացնել պայմանագրով սահմանված փաստաթղթերը, մասնավորապես՝

- *չեն ներկայացվել պատրաստման որակի և մետաղի հավաստագրերի բնօրինակները,*
- *առկա չեն եղել արտադրող ձեռնարկությունների միջուկային էներգետիկայի համար արտադրման հավաստագիրը,*
- *չեն ներկայացվել լիազորված կազմակերպությունների կողմից հաստատված որակի պլանները:*

Նույն գրությամբ արձանագրվել է, որ «Վիշկա» ՍՊԸ-ին առաջարկվել է ներկայացնել նշված փաստաթղթերը, սակայն ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը կրկին եղել են թերի և ոչ լիարժեք:

Գրությամբ վկայակոչվել են պայմանագրի մի շարք դրույթներ, այնուհետև «Վիշկա» ՍՊԸ-ին հայտնվել է, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է Պայմանագիրը և առաջարկվել է սեղմ ժամկետում տանել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին մատակարարած ապրանքը:

Նույն օրը, 14.12.2020թ. www.gnumner.am համացանցային կայքում հրապարակվել է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-18/20 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում կնքված N 01/213 պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հատարարությունը, համաձայն որի «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է՝ իր և «Վիշկա» ՍՊԸ-ի միջև 03.08.2020թ. կնքված թիվ 01/213 ծածկագրով պայմանագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

Գտնում ենք, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծելով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Վիշկա» ՍՊԸ-ի միջև 03.08.2020թ. կնքված թիվ 01/213 ծածկագրով պայմանագիրը, գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով թե՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի, թե՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և թե՝ թիվ 01/213 ծածկագրով պայմանագրի դրույթները հետևյալ հիմնավորմամբ.

Ինչպես արդեն նշել ենք, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Վիշկա» ՍՊԸ-ի միջև 03.08.2020թ. կնքվել է պետության կարիքների համար խողովակների և մետաղների ձեռքբերման թիվ «01/213» ծածկագրով պայմանագիրը, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Վիշկա» ՍՊԸ-ն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված խողովակների և մետաղներ, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

«Վիշկա» ՍՊԸ-ն 18.11.2020թ. մատակարարել է Պայմանագրով նախատեսված ապրանքը, և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից 25.11.2020թ. կազմված թիվ 11-20-339 մուտքային վերահսկողության ակտով արձանագրվել է, որ մատակարարված ապրանքը

համապատասխանում է Պայմանագրի հավելված 1-ին, և թերություններ են արձանագրվել միայն ուղեկցող փաստաթղթերի ցանկում: Մասնավորապես, որպես շտկման ենթակա թերություն նշվել է, որ ՍՊԸ-ի կողմից.

- *չեն ներկայացվել պատրաստման որակի և մետաղի հավաստագրերի բնօրինակները,*
- *առկա չեն եղել արտադրող ձեռնարկությունների միջուկային էներգետիկայի համար արտադրման հավաստագիրը,*
- *չեն ներկայացվել լիազորված կազմակերպությունների կողմից հաստատված որակի պլանները:*

«Վիշկա» ՍՊԸ-ին առաջարկվել է նշված փաստաթղթերը ներկայացնել մինչև 30.11.2020թ., հակառակ դեպքում պայմանագրի կլուծվի, իսկ մատակարարված ապրանքը ենթակա կլինի վերադարձման:

Վերոհիշյալին ի պատասխան՝ «Վիշկա» ՍՊԸ-ի կողմից 30.11.2020թ. գրությամբ կատարվել է Պատվիրատուի պահանջը, այն է՝ ներկայացվել են պահանջված փաստաթղթերը /հիմնավորումները/:

Այնուհետև վերոհիշյալ փաստաթղթերը և համապատասխան հիմնավորումները «Վիշկա» ՍՊԸ-ի կողմից կատարելուց հետո «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն 14.12.2020թ. թիվ Ե/40/2382-20 գրությամբ արձանագրվել է, որ «Վիշկա» ՍՊԸ-ին առաջարկվել է ներկայացնել նշված փաստաթղթերը, սակայն ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը կրկին եղել են թերի և ոչ լիարժեք, ուստի «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է իր և «Վիշկա» ՍՊԸ-ի միջև 03.08.2020թ. կնքված թիվ 01/213 ծածկագրով պայմանագիրը:

Գտնում ենք, որ Պայմանագիրը լուծելիս՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն թույլ է տվել մի շարք խախտումներ, մասնավորապես.

1. Նախ, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին 14.12.2020թ. թիվ Ե/40/2382-20 գրությամբ այդպես էլ չի նշել պայմանագրի այն կետը, որի հիման վրա լուծվում է տվյալ պայմանագիրը: Մասնավորապես, Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Նույն պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Այլ կերպ ասած, լուծման գրությամբ այդպես էլ անհայտ է մնում, թե լուծման հիմքում էական խախտման տեսակը՝ նախատեսված 2.1.7.1 ա) թե բ) կետով նախատեսվածը:

2. Պայմանագրի լուծման գրությամբ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն հստակ չեն մատնանշել, թե «Վիշկա» ՍՊԸ-ին փաստաթղթերը շտկելու առաջարկ ներկայացնելուց հետո ՍՊԸ-ն ինչ շտկումներ է կատարել կամ որ մասով ինչ շտկումներ չի կատարել, քանի որ գրությամբ ընդամենը վերացական նշվել է, որ «Վիշկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը կրկին եղել են թերի և ոչ լիարժեք, բայց թե ինչով են դրանք եղել թերի և ոչ լիարժեք, մնում են անհայտ:

3 .«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից «Վիշկա» ՍՊԸ-ից համապատասխան փաստաթղթեր պահանջելը եղել է ոչ իրավաչափ, քանի որ նման փաստաթղթեր ներկայացնելու պարտականություն նախատեսված չի եղել Պայմանագրի Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով: Մասնավորապես, Հավելված 1-ով սահմանվել են հետևյալ պահանջները.

Ապրանքների համար արտադրող ձեռնարկությունը պետք է ունենա միջուկային էներգետիկայի համար արտադրման հավաստագիր:

Ապրանքները պետք է ունենան պատրաստման որակի և մետաղի հավաստագրեր, համաձայն ՊՀԱԷԳ-7-008-89-ի:

Արտադրանքի ընդունումը պետք է իրականացվի լիազորված կազմակերպության կողմից ըստ որակի պլանի՝ համաձայն ՀՊ-071-18, ՌԴ ԷՕ 1.1.2.01.0713-2013 և ՌԴ ԷՕ 1.1.2.05.0929-2013 փաստաթղթերի:

Մինչդեռ, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից որպես բացթողումներ նշվել է հետևյալը.

- *չեն ներկայացվել պատրաստման որակի և մետաղի հավաստագրերի բնօրինակները,*
- *առկա չեն եղել արտադրող ձեռնարկությունների միջուկային էներգետիկայի համար արտադրման հավաստագիրը,*
- *չեն ներկայացվել լիազորված կազմակերպությունների կողմից հաստատված որակի պլանները:*

Նշված փաստերի համադրումից ակնհայտ է դառնում, որ Պայմանագրի Հավելված 1-ով միայն առկա է եղել պահանջ, որ ապրանքները պետք է ունենան պատրաստման որակի և մետաղի հավաստագրեր, սակայն «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն պահանջել է ներկայացնել պատրաստման որակի և մետաղի հավաստագրերի բնօրինակները: Այս կապակցությամբ

«Վիշկա» ՍՊԸ-ն հայտնել է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին, որ 2020թ. նոյեմբերի 18-ին մատակարարված ապրանքների հետ ներկայացվել են պատրաստման որակի և մետաղի հավաստագրերի բնօրինակներից արտատպված օրինակները, որոնց վրա առկա է եղել «Վիշկա» ՍՊԸ-ի կողմից գրառում, մասնավորապես՝ «Համաձայն Հ/Ֆ-ի իսկականի հետ ճիշտ է» , ինչը կնքվել և ստորագրվել է: Ուստի նման պայմաններում գտնում ենք, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի պահանջը ներկայացնել պատրաստման որակի և մետաղի հավաստագրերի բնօրինակները, ոչ իրավաչափ է և չի բխում Պայմանագրի դրույթներից:

Նույնը վերաբերում է մյուս պահանջներին:

Մասնավորապես, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն որպես թերություն նշել է, որ առկա չեն եղել արտադրող ձեռնարկությունների միջուկային էներգետիկայի համար արտադրման հավաստագիրը կամ չեն ներկայացվել լիազորված կազմակերպությունների կողմից հաստատված որակի պլանները, մինչդեռ Պայմանագրի Հավելված 1-ով ընդամենը պահանջվել է, որ ապրանքների համար արտադրող ձեռնարկությունը պետք է ունենա միջուկային էներգետիկայի համար արտադրման հավաստագիր և արտադրանքի ընդունումը պետք է իրականացվի լիազորված կազմակերպության կողմից ըստ որակի պլանի:

Հաշվի առնելով վերը նշված փաստերն ու փաստական հանգամանքները՝ գտնում ենք, որ սույն գործով առկա փաստական հանգամանքներ մեկնաբանվում են ի օգուտ «Վիշկա» ՍՊԸ-ին, մասնավորաես՝ Պայմանագրից չբխող պահանջների հիման վրա, անորոշ հիմնավորմամբ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծել է իր և «Վիշկա» ՍՊԸ-ի միջև 03.08.2020թ. կնքված թիվ 01/213 ծածկագրով պայմանագիրը, որը իր հերթին հանգեցրել է «Վիշկա» ՍՊԸ-ին «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառելու վտանգի առջև:»:

Մասնակիցը 21.01.2021թ.-ին ներկայացված դիրքորոշման լրացմամբ հայտնել է հետևյալը.

««Վիշկա» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՅ-ԼՕ-2020/284 ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ լրացուցիչ նկատառումները.

Ինչպես արդեն հայտնել էինք 14.01.2020թ. դիրքորոշմամբ, Պայմանագրի լուծման գրությամբ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն հստակ չեն մատնանշել, թե «Վիշկա» ՍՊԸ-ին փաստաթղթերը շտկելու առաջարկ ներկայացնելուց հետո ՍՊԸ-ն ինչ շտկումներ է կատարել կամ որ մասով

ինչ շրկումներ չի կատարել, քանի որ գրությամբ ընդամենը վերացական նշվել է, որ «Վիշկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը կրկին եղել են թերի և ոչ լիարժեք, բայց թե ինչով են դրանք եղել թերի և ոչ լիարժեք, մնում են անհայտ:

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից «Վիշկա» ՍՊԸ-ից համապատասխան փաստաթղթեր պահանջելը եղել է ոչ իրավաչափ, քանի որ նման փաստաթղթեր ներկայացնելու պարտականություն նախատեսված չի եղել Պայմանագրի Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով: Մասնավորապես, Հավելված 1-ով սահմանվել են հետևյալ պահանջները.

Ապրանքների համար արտադրող ձեռնարկությունը պետք է ունենա միջուկային էներգետիկայի համար արտադրման հավաստագիր:

Ապրանքները պետք է ունենան պատրաստման որակի և մետաղի հավաստագրեր, համաձայն ՊՀԱԷԳ-7-008-89-ի:

Արտադրանքի ընդունումը պետք է իրականացվի լիազորված կազմակերպության կողմից ըստ որակի պլանի՝ համաձայն ՀՊ-071-18, ՊՄ ԷՕ 1.1.2.01.0713-2013 և ՊՄ ԷՕ 1.1.2.05.0929-2013 փաստաթղթերի:

Մինչդեռ, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից որպես բացթողումներ նշվել է հետևյալը.

- *չեն ներկայացվել պատրաստման որակի և մետաղի հավաստագրերի բնօրինակները,*
- *առկա չեն եղել արտադրող ձեռնարկությունների միջուկային էներգետիկայի համար արտադրման հավաստագիրը,*
- *չեն ներկայացվել լիազորված կազմակերպությունների կողմից հաստատված որակի պլանները:*

Դիտողություն 1. Չեն ներկայացվել պատրաստման որակի և մետաղի

հավաստագրերի բնօրինակները,

Հավելված 1-ով սահմանվել է, որ ապրանքները պետք է ունենան պատրաստման որակի և մետաղի հավաստագրեր, համաձայն ՊՀԱԷԳ-7-008-89-ի:

Նշված փաստերի համադրումից ակնհայտ է դառնում, որ Պայմանագրի Հավելված 1-ով միայն առկա է եղել պահանջ, որ ապրանքները պետք է ունենան պատրաստման որակի և մետաղի հավաստագրեր, սակայն «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն պահանջել է ներկայացնել պատրաստման որակի և մետաղի հավաստագրերի բնօրինակները: Այս կապակցությամբ «Վիշկա» ՍՊԸ-ն հայտնել է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին, որ 2020թ. նոյեմբերի 18-ին մատակարարված ապրանքների հետ ներկայացվել են պատրաստման որակի և մետաղի հավաստագրերի

բնօրինակներից արտապատված օրինակները, որոնց վրա առկա է եղել «Վիշկա» ՍՊԸ-ի կողմից գրառում, մասնավորապես՝ «Համաձայն Հ/Ֆ-ի իսկականի հետ ճիշտ է» , ինչը կնքվել և ստորագրվել է: Ուստի նման պայմաններում գտնում ենք, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի պահանջը ներկայացնել պատրաստման որակի և մետաղի հավաստագրերի բնօրինակները, ոչ իրավաչափ է և չի բխում Պայմանագրի դրույթներից:

Այնուամենայնիվ, ի հավաստումն այն փաստի, որ ապրանքները ունեն պատրաստման որակի և մետաղի հավաստագրեր, համաձայն ՊՀԱԷԳ-7-008-89-ի, կից դիրքորոշմանը ներկայացվում է հավաստագրերի բնօրինակի սկանավորված ֆայլը:

Դիտողություն 2. Առկա չեն եղել արտադրող ձեռնարկությունների միջուկային էներգետիկայի համար արտադրման հավաստագիրը

Ըստ պայմանագրի հավելված 1-ի՝ Արտադրանքի ընդունումը պետք է իրականացվի լիազորված կազմակերպության կողմից ըստ որակի պլանի՝ համաձայն ՀՊ-071-18, ՐԴ ԷՕ 1.1.2.01.0713-2013 և ՐԴ ԷՕ 1.1.2.05.0929-2013 փաստաթղթերի:

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն որպես թերություն նշել է, որ առկա չեն եղել արտադրող ձեռնարկությունների միջուկային էներգետիկայի համար արտադրման հավաստագիրը, մինչդեռ Պայմանագրի Հավելված 1-ով ընդամենը պահանջվել է, որ ապրանքների համար արտադրող ձեռնարկությունը պետք է ունենա միջուկային էներգետիկայի համար արտադրման հավաստագիր, այլ ոչ թե այն ներկայացնի:

Այնուամենայնիվ, հայտնում ենք, որ շտկման փուլում «Վիշկա» ՍՊԸ-ն ներկայացրել է արտադրող ձեռնարկությունների միջուկային էներգետիկայի համար արտադրման հավաստագրերը (ի հավաստումն կցվում են հավաստագրերի սկանավորված տարբերակները):

Դիտողություն 3. Չեն ներկայացվել լիազորված կազմակերպությունների կողմից հաստատված որակի պլանները

Հավելված 1-ով սահմանվել է, որ արտադրանքի ընդունումը պետք է իրականացվի լիազորված կազմակերպության կողմից ըստ որակի պլանի՝ համաձայն ՀՊ-071-18, ՐԴ ԷՕ 1.1.2.01.0713-2013 և ՐԴ ԷՕ 1.1.2.05.0929-2013 փաստաթղթերի:

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն որպես թերություն նշել է, որ չեն ներկայացվել լիազորված կազմակերպությունների կողմից հաստատված որակի պլանները, մինչդեռ Պայմանագրի Հավելված 1-ով ընդամենը պահանջվել է, որ ապրանքների համար արտադրող ձեռնարկությունը պետք է ունենա միջուկային էներգետիկայի համար արտադրման հավաստագիր:

Բացի այդ, բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ «Վիշկա» ՍՊԸ-ն Պայմանագրի համաձայն՝ մատակարարել է խողովակներ և թիթեղ (трубы и листы):

Նշված արտադրանքի համար որակի պլան ներկայացնելու խնդրանքով՝ «Վիշկա» ՍՊԸ-ն դիմել է արտադրող ընկերությանը՝ «Красный октябрь» волгоградский металлургический комбинат АО (կցվում է):

Ի պատասխան նշված գրության՝ «Красный октябрь» волгоградский металлургический комбинат АО (կցվում է) հայտնել է, որ խողովակները և թիթեղը հանդիսանում են կիսաֆաբրիկատներ և ենթակա չեն որակի պլանի փաստաթղթավորման:

Ի հավաստումն վերոհիշյալ պնդման՝ «Красный октябрь» волгоградский металлургический комбинат АО (կցվում է) ներկայացրել է իր հարցումը՝ ուղղված "Росэнергоатом" կազմակերպությանը, որին ի պատասխան "Росэнергоатом" հայտնել է, որ խողովակների և թիթեղի արտադրման համար (հանդիսանում են կիսաֆաբրիկատ) որակի պլան չի պահանջվում:

Ի հավաստումն վերոհիշյալ փաստի՝ կից նաև ներկայացվում է "Росэнергоатом" 2020թ. մարտի 6-ին ընդունված որոշումը, որից պարզ է դառնում, որ խողովակները և թիթեղը հանդիսանում են կիսաֆաբրիկատ և նրանց նկատմամբ որակի պլան առկա չէ:

Նշված հարցը ՀՀ-ում հստակեցվել է նաև ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեին ուղղված համապատասխան հարցմամբ, որով «Վիշկա» ՍՊԸ-ն խնդրել է պարզաբանել, թե արդյոք կիսաֆաբրիկատները՝ խողովակները և թիթեղը, պահանջում են որակի պլան (կցվում է):

Ի պատասխան նշված հարցմանը՝ ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեն հայտնել է, որ վերոհիշյալ պահանջները տարածվում են ատոմային կայանների համակարգերի և էլեմենտների վրա, որոնց շարքին կիսաֆաբրիկատները չեն դասվում: Ըստ կոմիտեի՝ վերոհիշյալ հավելյալ պահանջը՝ որակի պլանի մասով, կարող է հավելյալ սահմանել պատվիրատուն՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ առաջնորդվելով:

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է փաստել, որ որակի կիսաֆաբրիկատների համար պլանի պահանջը չի բխում վերոհիշյալ ոլորտը կարգավորող օրենսդրույթան պահանջներից:

Բողոքներ քննող անձին խնդրում են նկատի ունենալ, որ Պատվիրատուի կողմից նույն ապրանքների ձեռքբերման համար հայտարարված նոր՝ ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-31/20

ծածկագրով մրցույթի հրավերում (կցվում է) մեր կողմից մատնանշված որոշ թերութեյուններ վերացվել են:

Մասնավորապես, պայմանագրի Հավելված 1-ով ուղղակիորեն սահմանվել է, որ Պայմանագրի կատարման փուլում անհրաժեշտ է ներկայացնել որակի և մետաղի հավաստագիր, արտադրող ձեռնարկության միջուկային էներգետիկայի համար արտադրման հավաստագիր, որակի պլանի փաստաթղթեր:

Վերոհիշյալից ուղղակիորեն բխում է, որ ներկա ձևակերպմամբ, երբ սահմանված է եղել «Պետք է ունենա» ձևակերպումը, այլ ոչ թե «Պետք է ներկայացնի» ձևակերպումը, ՍՊԸ-ին նշված փաստաթղթերը ներկայացնելու պահանջ չէր կարող ներկայացվել:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կրկին խնդրում ենք «Վիշկա» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրով ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:»:

4. <u>ՍՑ-LO-2020/284 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Վիշկա» ՍՊԸ-ի միջև 03.08.2020թ.-ին կնքվել է թիվ «01/213» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝

- ապրանքները պետք է լինեն նոր, արտադրման տարեթիվը սկսած 2019թ., փաթեթավորումը պետք է ապահովի ապրանքի մեխանիկական ամբողջականությունը, փաստաթղթերը պետք է թարգմանված լինենհայերեն կամ ռուսերեն լեզվով,
- 4-ից 6-րդ չափաբաժինների համար՝ արտադրող ձեռնարկությունը պետք է ունենա միջուկային էներգետիկայի համար արտադրման հավաստագիր: Ապրանքները պետք է ունենան պատրաստման որակի և մետաղի հավաստագրեր, համաձայն ՊՀԱԷԳ-7-008-89-ի: Արտադրանքի ընդունումը պետք է իրականացվի լիազորված կազմակերպության

կողմից ըստ որակի պլանի՝ համաձայն ՀՊ-071-18, ՀՀ ՇՆ 1.1.2.01.0713-2013 և ՀՀ ՇՆ 1.1.2.05.0929-2013 փաստաթղթերի:

iii. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի ՏՎԲ-ի 25.11.2020թ.-ի ապրանքի մուտքային վերահսկողության N 11-20-339 ակտի (եզրակացություն) համաձայն՝ մուտքային ստուգման արդյունքում հայտնաբերվել է, որ ուղեկցող փաստաթղթերը չեն համապատասխանել պայմանագրի թիվ 1 հավելվածի պահանջներին:

iv. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 14.12.2020թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ Ե/40/2382-20 ծանուցման համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար խողովակների և մետաղների ձեռքբերման նպատակով ս/թ հունիսի 2-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-18/20» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «Վիշկա» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2020թ.-ի օգոստոսի 3-ին կնքվել է թիվ 01/213 պայմանագիրը: Պայմանագրով մատակարարվող խողովակների և թիթեղի համար սահմանվել է «4-ից 6-րդ չափաբաժինների համար՝ արտադրող ձեռնարկությունը պետք է ունենա միջուկային էներգետիկայի համար արտադրման հավաստագիր: Ապրանքները պետք է ունենան պատրաստման որակի և մետաղի հավաստագրեր, համաձայն ՊՀԱԷԳ-7-008-89-ի: Արտադրանքի ընդունումը պետք է իրականացվի լիազորված կազմակերպության կողմից ըստ որակի պլանի՝ համաձայն ՀՊ-071-18, ՀՀ ՇՆ 1.1.2.01.0713-2013 և ՀՀ ՇՆ 1.1.2.05.0929-2013 փաստաթղթերի»:

Ս/թ նոյեմբերի 26-ի թիվ Ե/40/2244-20 գրությամբ «Վիշկա» ՍՊԸ-ն տեղեկացվել է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի ՏՎԲ-ի ս/թ նոյեմբերի 25-ի մուտքային վերահսկողության №11-20-339 ակտի վերաբերյալ, որի համաձայն ս/թ նոյեմբերի 18-ին (հաշիվ-ապրանքագիր թիվ Ա7023775529) մատակարարված ապրանքներին կից փաստաթղթերը չեն համապատասխանում պայմանագրով սահմանված փաստաթղթերին, մասնավորապես՝

- չեն ներկայացվել պատրաստման որակի և մետաղի հավաստագրերի բնօրինակները,
- առկա չեն եղել արտադրող ձեռնարկությունների միջուկային էներգետիկայի համար արտադրման հավաստագիրը,
- չեն ներկայացվել լիազորված կազմակերպությունների կողմից հաստատված որակի պլանները:

«Վիշկա» ՍՊԸ-ին առաջարկվել է ներկայացնել պայմանագրով սահմանված վերը նշված փաստաթղթերը, որից հետո Մասնակցի կողմից ստացված հիմնավորումները (փաստաթղթերը) կրկին եղել են թերի և ոչ լիարժեք:

Համաձայն կողմերի միջև կնքված Պայմանագրի՝

1.1 կետ-«Վիշկա» ՍՊԸ-ն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված խողովակներ և մետաղներ, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար,

2.1.1 կետ-Գնորդն իրավունք ունի ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրացուցային օրից ավելի,

2.1.4 կետ-Գնորդն իրավունք ունի, եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից,

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը,

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.7 կետ-Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրացուցային օրից ավելի:

2.4.1 կետ-Վաճառողը պարտավոր է գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.4 կետ-Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի

պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր,

2.4.6 կետ-Վաճառողը պարտավոր է հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 կետ-Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը,

2.4.8 կետ-Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 կետ-Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները,

6.1 կետ-Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.3 կետ-Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 կետ-Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

Պատվիրատուն հիմք ընդունելով «Վիշկա» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2020թ. օգոստոսի 3-ին կնքված թիվ 01/213 պայմանագրի վերոգրյալ դրույթները և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 2020թ.-ի նոյեմբերի 25-ի թիվ 11.20-339 ակտը՝ միակողմանի լուծել է «Վիշկա» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2020թ. օգոստոսի 3-ին կնքված թիվ 01/213 պայմանագիրը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.12.2020թ.-ի թիվ 26/26-1/19339-2020 գրությամբ «Վիշկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը

պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.2 կետի համաձայն՝ եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք, գնորդն իրավունք ունի՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը,

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Վիշկա» ՍՊԸ-ի միջև 03.08.2020թ.-ին կնքված թիվ «01/213» ծածկագրով պետական գնման պայմանագիր հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝

- ապրանքները պետք է լինեն նոր, արտադրման տարեթիվը սկսած 2019թ., փաթեթավորումը պետք է ապահովի ապրանքի մեխանիկական ամբողջականությունը, փաստաթղթերը պետք է թարգմանված լինենհայերեն կամ ռուսերեն լեզվով,
- 4-ից 6-րդ չափաբաժինների համար՝ արտադրող ձեռնարկությունը պետք է ունենա միջուկային էներգետիկայի համար արտադրման հավաստագիր: Ապրանքները պետք է ունենան պատրաստման որակի և մետաղի հավաստագրեր, համաձայն ՊՀԱԷԳ-7-008-89-ի: Արտադրանքի ընդունումը պետք է իրականացվի լիազորված կազմակերպության կողմից ըստ որակի պլանի՝ համաձայն ՀՊ-071-18, ՊՀ ԷՕ 1.1.2.01.0713-2013 և ՊՀ ԷՕ 1.1.2.05.0929-2013 փաստաթղթերի:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 14.12.2020թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ Ե/40/2382-20 ծանուցման համաձայն՝ Պատվիրատուն հիմք ընդունելով «Վիշկա» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2020թ. օգոստոսի 3-ին կնքված թիվ 01/213 պայմանագրի դրույթները և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 2020թ.-ի նոյեմբերի 25-ի թիվ 11.20-339 ակտը՝ միակողմանի լուծել է «Վիշկա» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2020թ. օգոստոսի 3-ին կնքված թիվ 01/213 պայմանագիրը:

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի ՏՎԲ-ի 25.11.2020թ.-ի ապրանքի մուտքային վերահսկողության N 11-20-339 ակտի (եզրակացություն) համաձայն՝ մուտքային ստուգման արդյունքում հայտնաբերվել է, որ ուղեկցող փաստաթղթերը չեն համապատասխանել պայմանագրի թիվ 1 հավելվածի պահանջներին:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, թիվ «01/213» ծածկագրով պետական գնման պայմանագրով Մասնակցի վրա դրված պարտավորությունների ենթադրյալ խախտումը տեղի է ունեցել Պատվիրատուի անգործության արդյունքում, վերջինս է նպաստել պարտավորությունները չկատարելուն և ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Պատվիրատուն, Մասնակցին տրամադրելով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի ՏՎԲ-ի 25.11.2020թ.-ի ապրանքի մուտքային վերահսկողության N 11-20-339 ակտը (եզրակացությունը), տեղեկացնելով վերջինիս կողմից մատակարարված ապրանքի Պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջներին չհամապատասխանելու փաստի մասին, չի տրամադրել ողջամիտ ժամկետ, որպես Պատվիրատուի համար ընդունելի ժամկետ՝

ապրանքը Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պահանջներին համապատասխանեցնելու համար: Այս փաստի առկայության պարագայում, միայն հնարավոր կլիներ հաստատված համարել Պայմանագրի էական պայմանների խախտման մասին, ինչպես սահմանվել է Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» ենթակետով, և դրանով պայմանավորված՝ հետագայում էլ (սույն ընթացակարգի քննության ժամանակ) հնարավոր կլիներ գնահատելու Պատվիրատուի գործողությունների օրինաչափությունը, և վերջապես գնահատելու Մասնակցի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորության խախտման փաստը:

Ընդ որում, պետք է փաստել, որ Պայմանագրի 2.1.2 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի, եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք,

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

Բացի այդ՝ Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» ենթակետով սահմանված ակնհայտ անհնարինության հիմքով պայմանագիրը միակողմանիորեն լուծելու իրավակարգավորման կիրառման համար անհրաժեշտ պայման է հանդիսանում ակնհայտությունը, որը տվյալ դեպքում, Պատվիրատուի կողմից, սույն գործի քննության ընթացքում, չհիմնավորվեց: Վերջինս չներկայացրեց որևէ վերաբերելի կամ թույլատրելի ապացույց առ այն, որ Մասնակցի կողմից պայմանագրին համապատասխանող ապրանքի փոխարինումն ակնհայտ անհնար էր Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում:

Բողոքներ քննող անձն, անդրադառնալով գործում առկա՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի ՏՎԲ-ի 25.11.2020թ.-ի ապրանքի մուտքային վերահսկողության N 11-20-339 ակտին, հարկ է համարում արձանագրել, որ պետական գնման պայմանագրի կատարման արդյունքների վերաբերյալ պետք է կազմվի եզրակացություն, որն էլ պետք է լինի ՀՀ ֆինանսների նախարարի 20.05.2017թ.-ի թիվ 228-Ն «պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ եզրակացության ձևը հաստատելու և ՀՀ ֆինանսների

նախարարի 2015 թվականի ապրիլի 1-ի թիվ 180-ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» հրամանով սահմանված պահանջների պահպանմամբ՝ ստորագրված գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 110-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ եթե պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրվել է բացասական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը եզրակացությունը և իր կողմից չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով տրամադրում է պատվիրատուի ղեկավարին, որոնք վերջինս մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է պայմանագիր կնքած անձին:

Սույն գործում առկա նյութերի հիման վրա՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի ՏՎԲ-ի 25.11.2020թ.-ի ապրանքի մուտքային վերահսկողության N 11-20-339 ակտը չի համապատասխանում ՀՀ ֆինանսների նախարարի 20.05.2017թ.-ի թիվ 228-Ն հրամանով հաստատված եզրակացության ձևին, որով, մասնավորապես, պետք է նշվեր բացասական կամ դրական եզրակացություն տալու մասին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը

տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ նման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.12.2020թ.-ի թիվ 26/26-1/19339-2020 գրությամբ «Վիշկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/284 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**